ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

«ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընտանեկան բռնությունն ինքնին կանանց նկատմամբ գենդերային խտրականության դրսեւորման ձեւ է. «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի հիման վրա ստեղծված կոմիտեն իր № 19 կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ընդհանուր բնույթի առաջարկով[1] արձանագրել է, որ գենդերային բռնությունը անհամաչափ ազդեցություն ունի կանանց վրա, ուստի դրա դեմ պայքարելիս պետք է հստակորեն հաշվի առնել գենդերային առանձնահատկությունները: Այս մոտեցումը արտահայտել է նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք նախադեպային գործերով[2]: Իր հերթին «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան նույնպես սահմանում է, որ պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական եւ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ յուրաքանչյուր անձի, հատկապես՝ կանանց, բռնությունից զերծ մասնավոր եւ հանրային կյանքով ապրելու իրավունքը ապահովելու եւ պաշտպանելու ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Օրենքի 2-րդ՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման եւ ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության սկզբունքները» վերտառությամբ հոդվածը համալրել հետեւյալ բովանդակությամբ 2-րդ եւ 3-րդ մասերով.

«2. Ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին օրենսդրությունը հիմնված է օրինականության, հավասարության եւ խտրականության բացառման, տուժողակենտրոն մոտեցման (ընտանեկան բռնության ենթարկված անձանց շահերի պաշտպանության առաջնայնության), գենդերային զգայունության սկզբունքների հիման վրա: Գենդերային զգայունության չափորոշիչները սահմանված են «Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքով:

3. Գենդերային հիմքով բռնությունից կանանց պաշտպանելուն եւ այն կանխելուն ուղղված այնպիսի հատուկ միջոցների ընդունումը, որոնք չեն վերաբերում տղամարդկանց, չի հանդիսանում խտրականության դրսեւորման ձեւ:»:

2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ամրագրված «ընտանիքում ավանդական արժեքների ամրապնդումը» որպես ընտանիքում բռնության կանխարգելման եւ

[1] Տես http://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/recomm.htm

[2] Տես http://hudoc.echr.coe.int/app/conversion/pdf/?library=ECHR&id=001-92945&filename=001-92945.pdf

ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության սկզբունք հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ «ավանդական արժեքներ» հասկացության սահմանումը ՀՀ իրավական որեւէ փաստաթղթում առկա չէ: «Ավանդական արժեք» եզրույթն իրավական կատեգորիա չէ, ուստի իրավակիրառ գործունեության մեջ անհնար է մասնավորեցնել այդ եզրույթի բովանդակության շրջանակը, քանի որ այն ուղղակիորեն կապված է սուբյեկտիվ ընկալման հետ եւ յուրաքանչյուր դեպքով՝ կախված իրավահարաբերության սուբյեկտների անձնական հատկանիշներից, իրավագիտակցության մակարդակից, կրթվածության աստիճանից եւ այլ հանգամանքներից, ավանդական արժեքների շրջանակն ու բովանդակությունը միանգամայն տարբեր կերպ է մեկնաբանվում, ինչը գործնականում հանգեցնում է իրավական որոշակիության սկզբունքի խախտման եւ մարդու մի շարք հիմնարար իրավունքների ոտնահարման: Այն նաեւ հակասում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային սկզբունքներին եւ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ հոդվածի ա) կետով ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք սույն Նախագծի շրջանակներում կարգավորել նաեւ այդ հարցը:

3. Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ. «Ընտանիքում բռնություն է համարվում սույն օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաեւ անտեսումը, վերահսկող վարքագիծը, որը կատարվել է ընտանիքի անդամների կամ նախկին կամ ներկա զուգընկերների միջեւ:»:

Առաջարկում ենք Նախագծում տեղ գտած սահմանմանն ավելացնել հետեւյալ արտահայտությունը՝ այն առավելապես միջազգայնորեն ընդունված սահմանմանը համապատասխանեցնելու նպատակով. «, անկախ նրանից՝ արդյոք բռնարարը բնակվում է կամ բնակվել է բռնության ենթարկված անձի հետ նույն բնակարանում, թե՝ ոչ:»:

4. Խիստ կարեւոր է ընտանեկան բռնությունն ինքնին քրեականացնել ներպետական օրենսդրությամբ: Ուստի առաջարկում ենք նախաձեռնել համալիր օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ ներառելով նաեւ քրեադատավարական օրենսդրության փոփոխություն:

5. Ինչպես Օրենքում, այնպես էլ Նախագծում սեռական բռնության առանձին դրսեւորումներ ներառված չեն: Մասնավորապես՝ անհրաժեշտ է ներառել «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 38 եւ 40-րդ հոդվածներում նկարագրված՝ կանանց սեռական օրգանների խեղման, անդամահատման եւ սեռական հետապնդմանն ուղղված հանցավոր գործողությունները, որոնց վերաբերյալ իրավակարգավորումներ գործող քրեական օրենսգիրքը նույնպես չի նախատեսում: Դրանք կարելի է ավելացնել կամ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ գլխում կամ ընտանեկան բռնության հանցագործությունների մասով ներառվելիք առանձին գլխում:

6. Հիմք ընդունելով «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպես նաեւ «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի կարգավորումները՝ առաջարկում ենք որպես հոգեբանական բռնության առանձին դրսեւորում ներառել կնոջը հղիության արհեստական ընդհատմանը հարկադրելը կամ կնոջ կամ աղջկա բնականորեն վերարտադրելու կարողությունը կորցնելուն կամ դրան հանգեցնող վիրահատության կատարմանը հարկադրելը: Միաժամանակ առաջարկում ենք համապատասխան փոփոխություններ եւ լրացումներ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում:

7. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետի համաձայն՝ հոգեբանական բռնությունը սահմանվում է որպես դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը: Բռնություն համարվելու համար, անշուշտ, սպառնալիքները չպետք է լինեն անիրատեսական, սակայն դրանց իրական լինելու պայմանը սահմանման մեջ ներառելը կարող է անհամաչափ բեռ դնել բռնության ենթարկված անձի համար՝ հիմնավորելու սպառնալիքների իրական լինելը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծով կարգավորել այդ հարցն ու համապատասխան փոփոխություններ կատարել Օրենքում:

8. Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 6-րդ կետով, որով սահմանվում է «վերահսկող վարքագիծ» հասկացությունը: Առաջարկում ենք հասկացության սահմանման մեջ ներառել նաեւ, որ վերասկող վարքագիծ է համարվում նաեւ անձի վարքագիծը կամ գործողությունները վերահսկելը

եւ կառավարելը՝ դրանք սեփական պատկերացումներին, ցանկություններին եւ կամքին համապատասխանեցնելու նպատակով՝ անձի անօգնական վիճակն օգտագործելով, շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ անձի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով:

9. Առաջարկում ենք Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 7-րդ կետով, որով կամրագրվի հետամտումը՝ որպես բռնության տեսակ. «Հետամտումը՝ դիտավորությամբ շարունակաբար անձին հետապնդելը կամ սպառնալից գործողություններ կատարելը, այդ թվում՝ ֆիզիկապես կամ հեռախոսային, նամակագրական, էլեկտրոնային եղանակով կամ սոցիալական ցանցերով կամ կապի այլ միջոցներով սպառնալիքներ հնչեցնելը, որոնք անձի մոտ վախ են հարուցում սեփական անձի կամ ընտանիքի անդամների, իր խնամքին գտնվող անձանց՝ այդ թվում՝ երեխաների կամ ազգականների անվտանգության կամ կյանքին եւ առողջությանը հնարավոր վնաս պատճառելու համար:»:

10. Առաջարկում ենք նախազգուշացումը որպես պաշտպանության միջոց հանել Օրենքի ձեւակերպումներից, քանի որ ընտանեկան բռնության դեպքերը պահանջում են կանխարգելման կամ պաշտպանական համարժեք միջոցների ձեռնարկում: Ձեւավորված վիճակագրական տվյալները փաստում են, որ նախազգուշացման կիրառումը որպես պաշտպանության միջոց շուրջ 2,5 անգամ գերազանցում է անհետաձգելի միջամտության որոշումների նկատմամբ, մինչդեռ նախազգուշացումը չի ենթադրում շոշափելի միջամտություն բռնության իրավահարաբերություններին, իսկ բռնության ենթարկված անձը շարունակում է մնալ բռնության անմիջական տիրույթում, որում կարող են առկա լինել վերջինիս կյանքի եւ անվտանգության համար իրական սպառնալիքներ: Ընտանեկան բռնության դեմ շոշափելի եւ արդյունավետ պայքար ծավալելու խնդիրը լավագույնս կարող է լուծվել, եթե բռնություն գործադրած անձը գիտակցի եւ անմիջականորեն կրի բռնության բացասական հետեւանքները, ինչը չի կարող ապահովել նախազգուշացման միջոցը: Գործնականում նախազգուշացումը չի ապահովում հետագա բռնության կանխարգելումը եւ որեւէ կերպ չի երաշխավորում տուժողների անվտանգությունը:

11. Առաջարկում ենք սույն օրենսդրական փոփոխությունների շրջանակներում կատարել փոփոխություն նաեւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում եւ «Ապաստարանում տեղավորված ընտանիքում բռնության ենթարկված անձի

գտնվելու վայրը հրապարակելը» իրավախախտման սուբյեկտների թվում ավելացնել նաեւ ընտանեկան բռնության ենթարկված եւ (կամ) նրանց խնամքի տակ գտնվող անձանց, քանի որ գործնականում չի բացառվում, որ առավելապես նշված անձանց կողմից են նաեւ այդ տեղեկությունները հայտնի դառնում: